

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի
2014 թվականի հուլիսի 21-ի թիվ 1 որոշմամբ

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ <<ԿՄԳԳ-ՊԸԱՇՁԲ 14/1>>

Պատվիրատուն՝ Գետարգելի գյուղապետարանը, որը գտնվում է գ. Գետարգել Ս. Ալեքսանյան փողոց թիվ 7 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել Գետարգել համայնքի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանում Գետարգել համայնքի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերումը:

Գնումը ֆինանսավորվելու է Գետարգել համայնքի 2014թ. բյուջեի միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Կնքվելիք պայմանագրի կատարման պահանջվող ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածն է:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6 հոդվածի պայմանների համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեն բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցների՝ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների՝ հրավերով սահմանված համապատասխանությունը գնահատելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հրավերով սահմանված փաստաթղթեր:

Պարզեցված ընթացակարգի հրավերը փաստաթղթային տեսքով ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչև սույն հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված՝ 10-րդ օրը, ժամը 10:00-ն:

Պարզեցված ընթացակարգի հրավերը թղթային ձևով տրամադրելու համար պահանջվում է վճար՝ 5000 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի Կենտրոնական Գանձապետարան 900105229117 հաշվեհամարին:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին՝ գ. Գետարգել Ս. Ալեքսանյան փողոց թիվ 7 հասցեով, մինչև սույն հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 10:00-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով:

Պարզեցված ընթացակարգի հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 9 հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքվելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է՝ հայտարարությունը սահմանված ժամկետում տեղադրելով լիազոր մարմնի ինտերնետային կայքում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Մ. Զավադյանին:

Հեռախոս՝ /0222/6-14-88:

Էլ. փոստ՝ getargel-gt@mail.ru:

ԳԵՏԱՐԳԵԼԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի

2014թ-ի հուլիսի 21-ի թիվ 1 որոշմամբ

ԳԵՏԱՐԳԵԼԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հ Ր Ա Վ Ե Ր

Գետարգելի գյուղապետարանի կողմից

Գետարգելի գյուղապետարանի կարիքների համար Գետարգել համայնքի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի
ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված պարզեցված ընթացակարգի

Հարգելի մասնակից,

Նախքան պարզեցված ընթացակարգի հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Սույն հրավերը տրամադրվում է Գետարգելի գյուղապետարանի (այսուհետև՝ Պատվիրատու) կարիքների համար **Գետարգել համայնքի** 1-ին փողոցի 1-ին նրբանցքի ասֆալտապատման աշխատանքների ձեռք բերման նպատակով ՀՀ <<ԿՄԳԳ_ՊԸԱՇՁԲ 14/1>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետև՝ Օրենք/, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված համապատասխան կարգի /այսուհետև՝ Կարգ/ և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված պարզեցված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց /այսուհետև՝ նաև Մասնակից/ տեղեկացնելու պարզեցված ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, պարզեցված ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ

1. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2. գնման գործընթացին համատեղ գործունեությամբ /կոնսորցիումով/ մասնակցող կազմակերպությունների:

Սույն պարզեցված ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պարզեցված ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

ՄԱՍ I

1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում Գետարգելի գյուղապետարանի կարիքների համար Գետարգել գյուղի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի ասֆալտապատման աշխատանքների կատարումը:

Աշխատանքների կատարման նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 7 հավելվածում:

Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում է հետևյալ լիցենզիան՝ շինարարության իրականացում ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտի՝

- Տրանսպորտային շինարարություն:

2. Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները, դրանց գնահատման կարգը

2.1 Պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը պետք է ունենա տվյալ գնումներին մասնակցելու իրավունք և բավարարի սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին:

2.2 Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1/ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2/ մասնագիտական փորձառություն,

3/ տեխնիկական միջոցներ,

4/ ֆինանսական միջոցներ,

5/ աշխատանքային ռեսուրսներ:

2.3 Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1/ որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2/ որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3/ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4/ որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

Նախկինում կատարված պայմանագրերի		
Առարկան	Ծավալը՝ գումարային արտահայտությամբ /ՀՀ դրամ/	Պատվիրատուի անվանումը և նրա հետ կապ հաստատելու տվյալները

1	2	3
Տարեթիվ.....թվական		
1.		
2.		
Տարեթիվ.....թվական		
1.		
2.		
Տարեթիվ.....թվական		
1.		
2.		

2. Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն /հավելված 3.1/, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում շինարարական աշխատանքների կատարումը:
- «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.*

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն /հավելված 3.2/, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է համանման /նմանատիպ/ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից,

1. Մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրի կամ պայմանագրերի պատճենը/ները/, իսկ դրա /դրանց/ պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի /պայմանագրերի/ կողմերի հաստատած՝ պայմանագրի /պայմանագրերի/ կատարումը հավաստող ակտի /հանձնման-ընդունման արձանագրության և այլն/ պատճենը կամ տվյալ պայմանագրի /պայմանագրերի/ կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:
2. Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով սահմանված պահանջները:
- «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.*

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն /հավելված 3.3 և 6.3/ պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ սույն հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության մասին՝ կցելով այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով.

Հ/Հ	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, /եթե առկա է/ և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը
1			
2			
3			

....			
------	--	--	--

2. Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն են.

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Բեռնատար ինքնաթափ մեքենա	ցանկացած	2
Ասֆալտբետոնե գործարան	ցանկացած	1
Գրեյդեր	ցանկացած	1
Կոմպրեսատոր	ցանկացած	1
Գլանիվ	ցանկացած	1

«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

1. Մասնակիցը ներկայացնում է վարկային գծի տրամադրման մասին բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագիր կամ բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական կազմակերպության կողմից տրված երաշխիք: Ընդ որում, վարկային գծի կամ երաշխիքի չափը չպետք է պակաս լինի մասնակցի գնային առաջարկի տասը տոկոսից, իսկ գործողության ժամկետը չպետք է պակաս լինի պայմանագրի ամբողջ ծավալով կատարման վերջնաժամկետից՝ բացառությամբ պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետի:

Եթե գնումն իրականացվում է Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում, ապա վարկային գիծը կամ երաշխիքը ներկայացվում է միայն տվյալ ժամանակահատվածում գնում կատարելու համար մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի համար և միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանք, որպես հետագայում նախատեսվելիք ֆինանսական միջոցների մասով վարկային գծի կամ երաշխիքի տրամադրման ապահովում: Տուժանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի և տվյալ ժամանակահատվածում գնում կատարելու համար մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի տարբերության տասը տոկոսից:

2. Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով.

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն /հավելված 3.4 և 6.2/ պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին,
2. Մասնակիցը ներկայացնում է պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները հետևյալ ձևով.

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
Անուն, ազգանուն	Որակավումը	Աշխատանքային փորձը		Գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
		Ժամանակահատվածը	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1				

2				
3				
.....				

Ընդ

որում, աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի, Բարձրագույն կրթությունը և որակավորումը հավաստող փաստաթղթերի /դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն/ պատճենները,

3. Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են.

Աշխատակազմում պետք է ընդգրկված լինի՝

- առնվազն մեկ աշխատակից՝ աշխույժ, որը պետք է ունենա Բարձրագույն կրթություն, ճանապարհաշինարարի որակավորում, ինչպես նաև մասնագիտական առնվազն մեկ տարվա փորձառություն համանման աշխատանքների ոլորտում,

- բանվորներ՝ 5 /հինգ/ հոգի:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին՝ գրավոր: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց հինգ օրացուցային օր առաջ:

3.2. Պատվիրատուն պարզաբանումը տրամադրում է հարցումը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի 1-ին մասի 3.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4. Հայտերի ներկայացման վերջնաժամկետից առնվազն հինգ օրացուցային օր առաջ կարող են հրավերում կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում: Սույն ընթացակարգի հրավերում փոփոխություններ կատարելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում

հայտ ներկայացրած մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

3.5. Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

4. Հայտը ներկայացնելու կարգը

4.1 Պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում պարզեցված ընթացակարգի հայտ: Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Պարզեցված ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Պարզեցված ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Պարզեցված ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ <<Պարզեցված ընթացակարգի հայտերը պատրաստելու>> հրահանգում:

4.2 Մասնակիցները կարող են պարզեցված ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1/ հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր,

2/ հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորությանը,

3/ մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն,

4/ կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

4.3. Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան պարզեցված ընթացակարգի հայտարարությունը հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 10:00-ին, գ.Գետարգել Ս. Ալեքսանյան փողոց թիվ 7 հասցեով, Մ. Ջավադյանին: Պարզեցված ընթացակարգի հայտերը, ներառյալ սույն հրավերով նախատեսված գրությունը ստանում և պարզեցված ընթացակարգի հայտերի գրանցամատյանում գրանցում է գնումների համակարգող Մարինե Ջավադյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4.4 Մասնակիցները պարզեցված ընթացակարգի հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

1/ գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում,

2/ գնային առաջարկ՝ մեկ բնօրինակ,

3/ սույն հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություններ՝ մեկ

բնօրինակով, /ներառյալ որակավորման չափանիշները հավաստող սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը /,

4/ հայտի ապահովում՝ մեկ բնօրինակով,

5/ առաջարկներ գնման առարկայի տեխնիկական հատկանիշների վերաբերյալ / ծավալաթերթ-նախահաշվով/ և ընդհանուր աշխատանքների ու աշխատանքների առանձին տեսակների իրականացման ժամանակացույց:

6/ էլեկտրոնային փոստի հասցեն,

7/ հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր /տեղեկություններ/:

4.5 Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված պարզեցված ընթացակարգի հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

4.6. Կնքվող պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիրը կնքելուց հրաժարված մասնակիցը: Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան 25 տոկոսը, ապա՝

1/ մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը /տվյալները/,

2/ հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին,

3/ պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ,

4/ մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների համար:

5. Պարզեցված ընթացակարգի հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը

5.1 Հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից պարզեցված ընթացակարգի հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.3 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Հայտում փոփոխությունների մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ <<Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու>> հրահանգի 4.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով <<փոփոխում>> բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև պարզեցված ընթացակարգի հայտերի բացումը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

6. Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովումը

6.1 Մասնակիցը, պարզեցված ընթացակարգի հայտով, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է պարզեցված ընթացակարգի հայտի ապահովում: Հայտի ապահովման չափը չի կարող պակաս լինել պարզեցված ընթացակարգի հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

6.2 Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 5 հավելվածով:

6.3 Պարզեցված ընթացակարգի հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1/ հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից,

2/ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

3/ հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

6.4 Հայտերի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

6.5. Սույն հրավերի 3-րդ բաժնին համապատասխան՝ սույն հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտեր ներկայացրած մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում: Հակառակ դեպքում հայտը մերժվում է:

7. Պարզեցված ընթացակարգի հայտերի բացումը

7.1 Պարզեցված ընթացակարգի հայտերի բացումը կկատարվի պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստում՝ պարզեցված ընթացակարգի հայտարարության հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրվա ժամը 10:00-ին, Գ.Բալահովիտ, 1-ին փողոց թիվ 38 հասցեում: Մասնակիցը կամ նրա ներկայացուցիչը կարող է ներկա գտնվել գնահատող հանձնաժողովի նիստերի աշխատանքներին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

7.2 Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը /անունը/, տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

7.3 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակցին որոշելու համար գնային առաջարկների համեմատումն իրականացում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետի «է» ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են ՀՀ դրամով՝ տվյալ օրվա Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով:

7.3.1 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել

միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.3.2 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

1/ առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները /համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները/,

2/ հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

3/ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը:

4/ յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված ժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

5/ բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

7.4 Հանձնաժողովի նախագահը հրապարակում է օրենքով նախատեսված տեղեկությունները և հանձնաժողովի հաջորդ նիստի օրը, ժամը և նիստը հայտարարում փակված:

7.5. Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովը պարզեցված ընթացակարգի հայտերը բացելուց հետո կազմում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է.

ա) տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

բ) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

գ) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ պարզեցված ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

դ) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

ե) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

զ) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

է) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ,

ը) պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

թ) տեղեկատվություն՝ պարզեցված ընթացակարգի հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

ժ) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

ժա) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

7.6. Պայմանագրերը կարող են իրականացվել գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով:

7.6.1 Գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը: Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները):

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

4) Մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալի պարտավորությունների համար:

7.6.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր:

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

4) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7. Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

Հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

8. Պարզեցված ընթացակարգի հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը

8.1. Որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը գնահատում է ներկայացված փաստաթղթերի /տեղեկությունների/ համապատասխանությունը սույն հրավերով սահմանված պահանջներին: Սույն կետով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում՝ քարտուղարը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկանում է մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1/ շտկվելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար,

2/ չշտկվելու դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

8.2. Ներկայացված փաստաթղթերը գնահատվում են բավարար, եթե սույն հրավերի 8.1. կետով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են սույն հրավերով նախատեսված պահանջներին: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

8.3. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.4. Մասնակիցը իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր:

8.5. Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1/ տվյալ մասնակցի մասնակցությունը դադարեցվում է, այդ թվում՝ այդ Մասնակցի հետ գնումների մասին ՀՀ օրենսդրության շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը պատվիրատուների կողմից միակողմանիորեն լուծվում են:

2/ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում,

3/ ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են ՀՀ գլխավոր դատախազություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5. կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8. Մինչ պայմանագիր կնքելը Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին Պատվիրատուն հայտարարում է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով ուղարկելով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին:

8.9. Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը 5 օրացուցային օր է: Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

8.10. Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11. Եթե հանձնաժողովի անդամը և /կամ/ մասնակիցը հայտերի բացման, գնահատման կամ ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք, ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է այդ արձանագրություններին:

9. Պայմանագրի ապահովումը

9.1 Պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը ներկայացնում է պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիր կնքվում է, եթե ընտրված մասնակիցը, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է պայմանագրի կատարման ապահովում միակողմանի հաստատված մասնակցի կողմից՝ տուժանքի ձևով, որի չափը հավասար է պայմանագրի գնի տասը տոկոսին:

9.2 Պայմանագրով կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես ներկայացնում է կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով:

9.3 Պայմանագրի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին՝ պայմանագրի կատարման, ներառյալ պայմանագրով նախատեսված երաշխիքային ժամկետը, ավարտից հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում:

9.4 Կանխավճարի ապահովումը վերադարձվում է պայմանագրի կատարման ավարտից հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում:

10. Պայմանագրի կնքումը

10.1 Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի որոշման հիման վրա Պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է գնման պայմանագիր: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

10.2 Ընտրված մասնակիցը հայտարարվելուց հետո, երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով գնման պայմանագիր կնքելու առաջարկը և գնման պայմանագրի նախագիծը: Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և գնման պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում պայմանագրի, իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

10.3 Մինչև սույն հրավերի 9.2 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

11. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե.

ա) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

բ) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

գ) ոչ մի հայտ չի ներկայացվել.

դ) պայմանագիր չի կնքվում.

11.2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

11.3. Տեղեկագրում հրապարակելու նպատակով գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորումը:

12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

12.1 Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.2 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

ա) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները՝ գնումների բողոքարկման խորհրդին.

բ) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

12.3 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

- 1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.
- 2) պատվիրատուի անվանումը և հասցեն.
- 3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.
- 4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.
- 5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.
- 6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը.
- 7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագրի կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում: Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը 5 /հինգ/ օրացուցային օր է:

12.6. Գնումների բողոքների ներկայացման, քննման և որոշումների կայացման հետ կապված հարաբերությունները սահմանված են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ բաժնով:

ՄԱՍ II

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելիս:

1.2 Պարզեցված ընթացակարգի հայտերը (ներառյալ բոլոր փաստաթղթերը) պետք է կազմված լինեն հայերեն:

2. Պարզեցված ընթացակարգի հայտը

2.1 Պարզեցված ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել պարզեցված ընթացակարգի հայտ: Պարզեցված ընթացակարգի հայտը սույն հրավերով նախատեսված կարգով պարզեցված ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է:

2.2 Մասնակիցները պարզեցված ընթացակարգի հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված

ա/ ընթացակարգին մասնակցելու դիմում /հավելված 1/, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն

բ/ հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին /հավելված 2/,

գ/ հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնություն բացակայության մասին /հավելված 2/,

դ/ հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանության մասին իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված հայտարարություն (Հավելված N 3), որ ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

3) տեխնիկական միջոցներ,

4) ֆինանսական միջոցներ,

5) աշխատանքային ռեսուրսներ

և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),

ե/ հայտարարություն՝ <<Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը>> որակավորման չափանիշին համապատասխանության մասին /հավելված 3.1/, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում շինարարական աշխատանքների կատարումը:

Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

գ/ հայտարարություն՝ <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշին համապատասխանության մասին /հավելված 3.2/, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր՝ կցելով նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետներում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը /կամ պայմանագրերը/ գնահատվում է /կամ գնահատվում են/ նմանատիպ, եթե դրա /դրանց/ շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը /կամ հանրագումարային ծավալը/՝ գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ե/ հայտարարություն՝ ֆինանսական միջոցների առկայության մասին /հավելված 6.1/, որը տրամադրվում է վարկային գծի տրամադրման մասին բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքած պայմանագրի կամ բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից տրված երաշխիքի ձևով: Ընդ որում, վարկային գծի կամ երաշխիքի չափը չպետք է պակաս լինի մասնակցի գնային առաջարկի տասը տոկոսից, իսկ գործողության ժամկետը չպետք է պակաս լինի պայմանագրի ամբողջ ծավալով կատարման վերջնաժամկետից՝ բացառությամբ պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետի:

Եթե գնումն իրականացվում է օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում, ապա վարկային գիծը կամ երաշխիքը ներկայացվում է միայն տվյալ ժամանակահատվածում գնում կատարելու համար մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի համար և միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանք, որպես

հետագայում նախատեսվելիք ֆինանսական միջոցների մասով վարկային գծի կամ երաշխիքի տրամադրման ապահովում: Տուժանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի և տվյալ ժամանակահատվածում գնում կատարելու համար մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի տարբերության տասը տոկոսից, իսկ գործողության ժամկետը չպետք է պակաս լինի պայմանագրի ամբողջ ծավալով կատարման վերջնաժամկետից՝ բացառությամբ պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետի:

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ը/ հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին /հավելված 3.4 և 6.2/, ընդ որում, աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (ղիպլում, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

թ/ հայտարարություն՝ պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին /հավելված 3.3 և 6.3/՝ կցելով սույն հրավերով պահանջվող այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ Մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները: Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ժ/ գնային առաջարկ, որը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ, չեն պահանջվում և ներկայացվում: Ընդ որում, գնային առաջարկին կցվում է լրացված ծավալաթերթը և աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը՝ հաստատված՝ ստորագրված և կնքված Մասնակցի կողմից: Ցանկալի է հայտում ներառել ծավալաթերթ-նախահաշվի էլեկտրոնային տարբերակը՝ կազմված համակարգչային /EXCEL/ ծրագրով՝ էլեկտրոնային կրիչով:

լ/ հայտի ապահովում՝ տուժանքի ձևով /հավելված 5/,

ի/ պայմանագրերը գործակալության կամ ենթակապալի պայմանագրեր կնքելու միջոցով իրականացվելու դեպքում, անհրաժեշտ է հայտով ներկայացնել սույն հրավերի 1-ին մասի 7.6.1 և 7.6.2 կետերով սահմանված փաստաթղթերը:

3. Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջները

3.1 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.2 Հայտում ներառվող՝ ղիպլումների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած չեն ճանաչվել (համարվել):

3.3 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

3.4 Սույն հրահանգի բոլոր այն փաստաթղթերը, որոնք ստորագրվում և(կամ) կնքվում են Մասնակցի կողմից, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք պահանջվել են ստորագրված և(կամ) կնքված լինեն տրամադրողի կողմից՝ պետք է ստորագրված և(կամ) կնքված լինեն բնօրինակով:

4. Հայտի գնային առաջարկը

4.1 Առաջարկվող գինը աշխատանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

4.2 Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

5. Հայտերը պատրաստելու կարգը

5.1 Մասնակիցը պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձնվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և 1 օրինակ պատճեից, ընդ որում բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճե հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը պետք է կնքված և ստորագրված լինեն Մասնակցի կողմից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են <<բնօրինակ>> և <<պատճե>> բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա պարզեցված ընթացակարգի հայտը կազմելու լեզվով նշվում են.

ա) պատվիրատուի անվանումը և պարզեցված ընթացակարգի հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) պարզեցված ընթացակարգի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

Հավելված 1
ՀՀ <<ԿՄԳԳ_ՊԸԱՇՁԲ 14/1>> ծածկագրով

պարզեցված ընթացակարգի հրավերի
ՀՀ <<ԿՄԳԳ_ՊԸԱՇՁԲ 14/1>> ծածկագրով

պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին
